



Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարեկանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում զրկում են միմիայն խմորագործական միջ:
Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմորագործիկներ բաց է առաւտուան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

Պատմական գրականութիւն. — Ներքին ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. Նամակ Արդունից. Ներքին լուրեր. —
ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մի գիծ թուրքաց շա-
յատանի տնտեսական գրութիւնից. Նամակ
Թիւրքիայից. Արտաքին լուրեր. — ՀՆՈՒԱԳՎՈՒԹԻՒՆ.
— ԲՈՐՍԱ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱ-
ԿԱՆ. Պարիզից.

ՊԱՏՄԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

II

Հայոց պատմութիւնը այն ձևով, ինչ
ձևով նա ներկայանում է մեզ մեր պատ-
մական գրքերում, և ինչ ձևով որ նա ա-
ւանդվել է տարիներից ի վեր մեր դպրոց-
ներում, իսկապէս Հայոց պատմութիւնն է,
կամ աւելի ճիշդ ասած, Հայ ժողովրդի
պատմութիւնը է, այլ զանազան թագա-
ւորների և իշխանների պատմութիւնն, ու-
րոնք շատ քիչ կապ են ունեցել բուն ժո-
ղովրդի կեանքի հետ, և իրանց գործերով
և ընթացքով մաղի չափ անգամ չեն ար-
տայայտել այդ ժողովրդի ձգտումները,
ԱՆՀԱՅՆ այդ պատճառով սովորական
և ընդունված ձևով աւանդող Հայոց
պատմութեան մէջ բացի զանազան թա-
գաւորների միտքից և շատ անգամ
էլ զատարկ պատմութիւններից ուրիշ ո-
չինչ ազդու, և կրթիչ նիւթ չէ պարունակ-
վում:

«Արմենակին յաջորդեց Արամայիսը, Ա-
րամայիսը իր հօր նման աշխարհաշէն էր.
սա էլ մեռաւ, և նրան յաջորդեց Ամասիան...
Արշակը վատ թագաւոր էր. նա մեռաւ,
նրան յաջորդեց Վաղարշակը. Վաղարշակը
կուռեց իր թշնամիների դէմ. երբ նա մե-
ռաւ, նրան յաջորդեց իր որդին, որը եր-
կար չը թագաւորեց: Գրա ժամանակ թշնա-
միները տիրեցին Հայաստանին... Աշոտին
յաջորդեց Ամբաստը, որ շատ Հայքինասէր
թագաւոր էր. նրան էլ յաջորդեց Աշոտը,
որը իր քաջութեան համար կոչվեց Աշոտ
կրկաթ. նա գնաց կռիւ իր թշնամիների
դէմ... և այլն» — ահա մօտաւորապէս
ինչպիսի գաղափարներ, և որ աստիճա-
նի միտքեցողութեան և մեքենայականու-
թեան է հասցրած եղել Հայոց պատմու-
թեան:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՐԻԶԻՑ

XV

Հետաքրքրելով իրական արհեստագործական
լուսնների հարցով, ես, ինչպէս ասեցի, դիմեցի
կանանց կոնգրէսի մի քանի անդամներին և նոյն
իսկ կոնգրէսի քարտուղարին տրիկին դը-Վորլի-
էին, այդ զարգացող մասին ճիշդ տեղեկութիւն-
ներ ունենալու համար, — բայց շատ քիչ և անո-
րոյ տեղեկութիւններ կարողացայ ստանալ: Ինձ
մինչև անգամ չը կարողացան քաղաքային ար-
հեստագործական զարգացողների հասցէները
տալ, այլ տուեցին միայն պ. Եարլ Լամբլիէի
հասցէն, որը, ինչպէս ինձ ասեցին, այդ հարցի
մասնագէտն է: Բայց վերջը յայտնվեց, որ պ. Լը-
մօնիէ շատ ծերացած լինելով, այլ ևս չէ զբաղ-
վում այդ զարգացողների, այլ զբաղվում
է այժմ օրիորդ Տօւսէն: Բայց յարգելի օրիորդն
էլ, աւելացնում էին, անկարող կը լինի տալ ձեզ
յիշեալ զարգացողների տպագրված պրօգրամները,
քանի որ զրանք տպագրված չեն, այլ կը տայ
ձեզ միմիայն զարգացողների հասցէները, իսկ դուք
ինքներդ պէտք է մանգաք Պարիզում, ինքներդ
պէտք է այցելէք յիշեալ զարգացողները: Այդ բանը
ինձ արդէն անհարկ էր անելու, քանի որ ես
մի քանի օրից յետոյ պէտք է հեռանայի Պա-
րիզից, ուրեմն այդ կարճ ժամանակամիջոցում
հնար էլ չէի ունենայ այցելել իրական արհես-
տագործական զարգացողները, որոնցից ոչ
մին քաղաքի կենտրոնում չէ գտնվում, այլ բոլոր-
քն էլ քաղաքի արտաքիններում, կենտրոնից
շատ հեռու են գտնվում:

Ինձ ուրիշ ելք չէր մնում, եթէ ոչ ծանօթանալ
հարցի հետ համաշխարհային ցուցահանդիսում:
Եւ ճշմարիտ, այցելելով Palais des arts libé-
raux (առաջ տարհատների պալատը), ես կար-
այր բաժնում Ֆրանսիայի պալատական արհես-
տագործական զարգացողների ցուցահանդէ-
սը: Բայց այդտեղ ես ոչ ոքին չը գտայ, որը ինձ
բացատրէր, տեղեկութիւններ տար... Այդքան
միայն իմացայ, որ լայն այդ գաւառական զբա-
ղացողների բաժնից, ցուցահանդիսի Pavillon de Pa-
ris ասված երկու շինութիւններից միում հան-
դէս են գրված Պարիզի քաղաքային վարչութեան
հաշուով պահվող երկու սեռի արհեստագործա-
կան զարգացողների արդիւնքները:

Անմիջապէս ուղեցի քաղաքի դէպի Pavillon
de Paris ի իրա գտալ այդտեղ արհեստագործական
զարգացողներին վերաբերեալ մի շատ ընդարձակ և
հարուստ բաժնի: Այդ բաժնի չէ, ես գտայ
այդ բաժնում մի օրիորդ, որը պարտաւորութիւն
ունէր վերահսկել իրական արհեստագործական զարգաց-
ողների բաժնի արդիւնքների վրա և նա բարի եղաւ
ինձ բոլոր անհրաժեշտ տեղեկութիւնները հաջոր-
դելու: Մասնավորապէս օրիորդը, Բավիէ (Ravier)
այգաւորում, կրկնեց ինձ որ իրա արհեստագործական

զբաղվելով Հայոց թագաւորների արած
աննշան պատերազմներով, և ներքին խառ-
նակութիւններով, մի առ մի թելով դը-
րանց «միմեանց յաջորդելը» մեր պատմու-
թիւնը մինչև այժմ էլ զլանում է պարզել
այն հարցը, թէ արդեօք Հայոց թագաւոր-
ների տիրապետութեան և իշխանութեան
եղանակը կարող էր ազատ պահել զահ-
լի անկումից, և երկիրը քաղաքական և
տնտեսական քայքայումից:

Մեր կարող էինք ուրիշ շատ կէտերի
վրա կանգ առնել, բայց այդքան էլ բա-
ւական է ցոյց տալու համար, որ մեր
պատմութիւնը մինչև այժմ զուրկ է միա-
ցիկ պատմական երևոյթների վրա քննա-
կան աչքով նայելուց, և այդ պատճառով
մինչև այժմ էլ զուրկ է այն տարրից, որը
տալիս է պատմութեան ուսումնասիրու-
թեանը առանձին կշիռ և արժէք:

Հետևելով մեր հին մատենագիրների հաս-
կանալի հին և իր ժամանակի համար նե-
րկի միակողմանիութեանը, մեր պատմու-
թիւնը մինչև այժմ էլ շարունակում է
պատմական ամբողջ կեանքի վրա նայել
շատ մակերևոյթ և անհասկանալի թել-
կերպով, առանց աշխատելու ջոկել պատ-
մական պիտանի նիւթերը այն անպէտք
մասերից, որոնք մեր պատմական գրա-
նութեան մէջ խառնված և լուծված են:

Մինչև այժմ մեր պատմութիւնը անդի-
տակցաբար հետեւելով խորհրդաց ժառան-
գած ձևին, Հայոց պատմութիւնը չորս
հարստութիւններ է բաժանում, որոնք
յայտնի են մեր պատմութեան
մէջ Հայագիտաց, Արշակունիաց, Բագրա-
տունիաց և Բուքինիաց հարստութիւնն ա-
նունով: Դա արդէն մի զօրեղ ապացոյց է,
որ մեր պատմութիւնը յիշուի որ միմիայն
թագաւորների պատմութիւնն է, և ոչ
թէ Հայ ժողովրդի պատմութիւն, որովհետեւ
Հայոց պատմական շրջաններում այդպիսի
չորս բաժանումներ չեն եղել: Նոյն պատմական
հիմք չունի, քանի որ այդ հարստու-
թիւններն իրանց սկզբնաւորութեամբ
ոչ մի առանձին փոփոխութիւն են մտցրել
Հայ ժողովրդի քաղաքական կեանքի մէջ,
և ոչ էլ հետեւեց են եղել նրա քաղաքա-
կան հանդամանքների:

Ամբողջութիւն կազմող Արշակունիաց

օրով տեղի է ունենում մի այնպիսի յեղա-
փոխութիւն, որը իրաւամբ կարող է մի
բաժանող գիծ լինել Հայոց պատմութեան
համար. դա քրիստոսէոսութեան մուտքն
է Հայաստանում, որը զգալի կերպով բա-
ժանեց հիմնադր Հայաստանը քրիստոնէայ
Հայաստանից, փոխելով ոչ թէ միայն ամ-
բողջ ժողովրդի կրօնական հայեացքնե-
րը, այլ և կերպարանք տալով նրա
քաղաքական յարաբերութիւններին, նրա
քաղաքական կեանքին, և նրա իդէալներին,
որոնք քրիստոնէութեան մուտք գործելուց
մի քիչ յետոյ հինգերորդ դարում, Վաթ-
րանից պատերազմի ժամանակ բաւական
զգալի և բուռն կերպով երևան եկան և
մեծ հետեւեցներ թողեցին...

Բագրատունեանց և Բուքինեանց իշխա-
նութիւնները իսկապէս ամբողջ Հայաստանի
իշխանութիւններ չէին, և այդ պատճառով
նրանց զոյգութիւնը մի ընթացք չը կա-
րողացաւ տալ ամբողջ երկրի քաղաքական
կեանքին, և Հայաստանի մէջ վեցերորդ—
եօթներորդ դարերից ստեղծված քաղաքա-
կան տնտեսական հանգամանքները ներգոր-
ծեցին ժողովրդի կեանքի վրա մինչև վերջին
դարերը, առաջ բերելով երկրի մէջ այնքան
երկար դարերի ընթացքում գաղթականու-
թիւն, տնտեսական քայքայում, մտաւոր
կատարեալ անշարժութիւն, և կրօնական մի
այնպիսի խիստ ուղղութիւն, որը վանքերի
և մենաստանների մէջ կենտրոնացրեց ամ-
բողջ ազգի մտաւոր ստեղծագործութիւնը
և մտաւոր ոյժերը...

Եւ ահա, եթէ պատմութիւնը պատմա-
կան պերիօդներ որոշելիս կը հիմնվի
այնպիսի քաղաքական-կրօնական-կուլտուրա-
կան մեծ փոփոխութիւնների վրա, եթէ պատ-
մական գրականութիւնը կը սկսի խորը թա-
փանցել, և զանել ժողովրդի զարգացման և
քաղաքական անկման պատճառները, այն
ժամանակ անկասկած պատմութեան ու-
սումնասիրութիւնը ժամանակակից սե-
րունդների համար կարող է ունենալ զար-
գացնող ներգործութիւն: Զբաղեցնել մի ամ-
բողջ ազգի պատմութիւնը միմիայն թա-
գաւորներով, պատմութեան էջերը լցնել
զանազան իշխանների դաւաճանութեան
պատմութիւններով, ժողովրդի տեղ հան-
դէս բերել իշխողներ, բնական մի երևոյթ

րաց զարգացողների պրօգրամները տպագրված չեն և
ինքն պարտաւոր է ամեն տեսակ, թէ բերանացի
և թէ գրաւոր տեղեկութիւններ հաղորդել: Նախ
քան այցելում իրական արհեստագործաց բարձ-
րագոյն զարգացողների բաժնը, օրիորդ Բավիէ
տարաւ ինձ իրական տարրական զարգացողների
բաժնը:

Պարիզի քաղաքային տարրական զարգացողնե-
րից արդէն սկսում են սովորեցնել արհեստներ:
և ձեռագործ: Տղաների տարրական զարգացողնե-
րում սովորեցնում են այն արհեստների սկզբունք-
ները, որոնք այնուհետև աւանդվում են արհես-
տագործաց (professionnel) արական զարգացողներում:
Նոյնպէս և աղջիկների տարրական զարգացողներում
սովորեցնում են սանտահիներին իրական արհեստ-
ների սկզբունքները, զիւրաւորապէս նկարչու-
թեան և ձեռագործի (կար ու ձեռք) սկզբունքնե-
րը: Գուցէ ինձ կողմնապահ կանուանէք, բայց ես
այն կարծիքի եմ, որ այստեղ իրական տարրա-
կան զարգացողների աշակերտութիւնը արդէն այն-
պէս զեղեցիկ կարում և ձեռում են, որ երանի
թէ մեր արհեստագործաց իրական զարգացողներում
աշակերտութիւնը այդքան հմուտ լինէին...

Մի քանի օր շարունակ այցելելով Pavillon de
Paris քաղաքային վարչութեան բաժնը, «միջոց
ունեցալ աւելի մօտ ծանօթանալու օրիորդ Բա-
վիէի հետ և նա լիպուկութիւն ստանալով զբա-
ղացողների վարչութիւնից, ընծայեց ինձ տարրա-
կան զարգացողների աղջիկների ձեռագործների նը-
մուշներ... Այստեղ արդէն ձեռում և կարում են

այնպիսի զեղեցիկ զգեստներ, սկսելով փորել
տիկինների (կուկլաների) զգեստներից մինչև հա-
սակաւոր կանանց զգեստներ, որ այդ զգեստները
(որոնք և հանդէս են գրված ցուցահանդիսում)
անվախ կարելի էր տալ մի երկրորդական մօլա-
յին խանութ՝ ծախելու համար: Ցարական զբա-
ղացողների աղջիկները, բացի կար ու ձեռք և նկար-
չութիւնից, սկսում են արդէն սովորել արհես-
տական ծաղիկներ էլ պատրաստել:

Նրանք, որոնք մեզ մօտ վերցվում են, երբ
մէկն ասում է թէ տարրական զարգացողներում
պէտք է սովորեցնել աշակերտներին որ և է ար-
հեստ, թող հասկանան, որ կեանքը և կեանքի
պահանջները քանի դուրս են անողորմ են դառ-
նում և այժմեան դարում ուսումը ամբողջի հա-
մար այլ ևս չէ կարող լինել լոկ վերացական,
այլ պէտք է կապված լինի անպատճառ և մի որ
և է հաջատու արհեստի, կամ գոնէ արհեստի
սկզբնաւորութեան հետ...

Գրիգոր Արծրունի

ճառները, որ շատերը, եթէ հնար լինէր, ուրախ կը լինէին հրաժարելով զրանց գործածութիւնից: Օրինակ, երկրորդ տեսակի հացը, տակսան պահածոնքնիւ պատճառով, այնպէս վատացրել են, որ բերանը դնել չէ կարելի իր դառնութեան պատճառով: Իսկ զինչին հօ թթու քուր է. տալիս էք մի բուրլ թուղու՝—թթու քուր են տալիս, տալիս էք 1 ր. 20 կ. և աւելի կրկին թթու քուր են տալիս... Մի խօսքով, շուտով թիֆլիսեցիք զինու. տեղ երեք կուրի քուր կը սկսեն գործածել:

Պետրոսկայա անտառային և երկրագործական ակադեմիան կերպարանափոխվելով պէտք է դառնայ գիւղատնտեսական Արդէն հրատարակված են դրան վերաբերող պատճառական մանրամասնութիւնները:

Մտադրութիւն կայ, ինչպէս հաղորդում են Պետերբուրգի լրագիրները, բանալ Անդրկովկասում, Բազուկի նահանգում այգեգործական դպրոց և մի շերամագահական օրինակելի կայարան:

ԲԱՆԱՆՅ գիւղից մեզ գրում են. «Մեր այգիները այս տարի ևս ոչինչ չեն խոտտանում իրանց տէրերին: Այս չորրորդ տարին է, ինչ գիւղացու «ամացը տալին է ընկնում»: Այնքանով տարի, ինչպէս ամեն տեղ, նոյնպէս և մեզ մօտ «թողը» մեծ հարուած տուեց այգետէրերին, նրանց առաջ երկու տարի իրար ետևից կարկուտը կործանել հետևանքներ ունեցաւ գիւղացիներին համար, իսկ այս տարի, թէև ոչ մի հիւանդութիւն չը կայ, բայց բերքի անօրինակ պակասութիւնը, շատ տեղ նրա խաղաւ բացաւ կայութիւնը բոլորովին ունչացրին նրանց յոյսերը»:

ՆԵՐՔԻՆ-ԱՅՏԱՅԻՑ մեզ գրում են. «Այստեղ անսովոր չօք է լինում: Խոտերը արդէն հնձվում են: Մի տաս օր էլ և հնձվելու պատրաստ կը լինեն նաև գարու արեւորը: Ամեն օր նկատում է, որ այս տարի հացաբոյսը առատ պտղաբերութիւն է խոտտանում: Կարելի է ասել տրեմն, որ գիւղացու համար գալիս են աւելի լաւ օրեր, այդ ուրախալի է, քանի որ շատերը երկու տարի շաբաթական հաց էին գնում»:

Մեզ ուղարկված է Շուշում տպագրված մի վէպիկ, որ կրում է «Ռուշան և Հիւրիդադ» վերնագիրը, և գրված է Եմին Մ. Տէր-Սարգսիանի ձեռքով: Ղարաբաղի կենտրոնի Տերքում այդ գեղեցիկ գրքը ուղարկ է ցոյց տալ, թէ որքան լաւարարարաբար էին վերաբերվում մահմետական խաները և իշխողները դէպի հայերը: Այնպէս Ռուշանը և Հիւրիդադը միմեանց սիրում էին, հեղինակը պատմում է, թէ ինչպէս Հիւրիդադը ընկաւ խանի հարեմը, բայց չը կամեցաւ ապրել առանց իր սիրածի, չը կամեցաւ իր կրօնը փոխել, և երկար նեղութիւնների կրելուց յետոյ, մի գիշեր լսելով իր բանտարկութեան սենյակի լուսամուտի տակ Ռուշանի ձայնը, իսկոյն լուսամուտից ներքև ընկաւ և ջարդուփշուր եղաւ. տեսաւ այդ դժբաղդութիւնը Ռուշանը, և ինքն էլ իր դաշտը իր կուրծքը խնց: Գիւրքը վերջանում է հետեւեալ խօսքերով. «Ներսէս սիրահարների անգուգալիս սէրը փշրեց, կործանեց խանի լաւած թակարդների շղթան և նրանք երանելի մահուան գրկում դարձեալ միացան միմեանց հետ»: Գրքի հեղինակը իր առաջաբանէ և հետևելով խօսքերով է վերջացնում. «Կայս ունեցի, որ ընտանեացը ներողամիտ կը լինի, եթէ այս գրքի մէջ օր և է թերութիւն նկատի»: Համաձայնում ենք ներողամիտ լինել:

ՎԵՐԻՆ-ԱԳՈՒՄԻՍ մեզ գրում են. «Նախկին հողաբարձութեան նախագահը՝ Աղափիրան և պիսկոպոսը հրաժարվել է հողաբարձութիւնից: Նոր հողաբարձութիւնը այս օրերս ժողով հրաւերել և առաջարկեց, որ ազգայինները սիրով վերաբերվեն գէպի դպրոցը և վճարեն տարիների ի վեր դպրոցին խոտացած գումարների տոկոսը: Բոլորն էլ չաւա՝ ասելով հեռացան: Աղուլեցոյ չաւա՝ անորոշ ժամանակի հետ է կապված, և այդ պատճառով յայտնի չէ թէ երբ այդ խոտումը կիրագործվի. առ այժմ փաստը այն է, որ դպրոցին հասանելի գումարները պահում են ամենքը իրանց մօտ, և այդ է պատճառը, որ ուսուցիչները շատերը մինչև այժմ էլ ամառվայ օճիկները չեն ստացել»:

ԱՐԱՍ-ԹՈՒՄԱՆԻՑ մեզ գրում են. «Արաս-Թումանը տարուց տարի գեղեցիկանում և մի լաւ կուրորտ է դառնում. գեղեցկաչին ամառանոցների միջով բարձրանում են դէպի սարերը շառաւիղներ, որոնք և ստացել են դրանքները դառնալու անուններ, ինչպէս «Միսիստերի ճանապարհ», «Միսիստերի ստորագրութիւն» և այլն. մանաւանդ այստեղի «Սիրոյ աղբիւրները» իրանց ջրբերութեամբ են ներշնչում հիւանդներին զգայուն սրբութեամբ ինչպէս յայտնի է, Արաս-Թումանը հըռ-չակաւոր է իր հանքային ջրով. ջուրը դուրս է դալիս սարի տակից և ունի ընդհանուր տաքութիւն 35.5°: ջրի վերամշակում 47°, ջուրը խողովակներով անցնում է սառնարանի միջով, որտեղ քերտվեալ աստիճանը ցածանում է գետակից բերած սառը ջրի ազդեցութեամբ, այդ նպատակով գետակից ջրանցք է շինած, որով ջուրը գալիս է և թափվում տաք խողովակների մէջ. այնուհետև հանքային ջուրը անցնում է վանանների շինութեան մէջ և ունենում է minimum 31° 35.5°: Այս շինութեան մէջ կորրիգորը անցնում է երկու շարք սենեակների միջով, որոնց մէջ առաջանքներ են շինած լողացողների համար: Բժշկի խորհրդի համաձայն, զրանց մէջ ջուրը թողնում են այս կամ այն վերամշակմամբ: Արաս-Թումանում առհասարակ զով եղանակ է լինում. բայց այս տարի ամառանոց եկողները այնքան էլ բազմաթիւ չեն այդ կողմից. յունիսին սաստիկ չօք անկուց յետոյ, այժմ անընդհատ անձրևներ են գալիս «հիւանդները», որ առանց այդ էլ մի շատ ուրախ օրեր չեն անցնում, այժմ «թթու» վերջութիւնը: Պէտք է ասած, որ մեր հասարակութիւնը ամառանոցում ապրելու բոլորովին ուրիշ կերպ է հասկանում. մարդիկ ամառանոց են գնում նախ և առաջ, ի հարկէ, մարդը օդ ծծելու, շատ զրօնելու, ամենապարզ կանգը վարելու: Այստեղ եկողները մեծ մասամբ հիւանդներ են լինում կամ զրանց ընտանիքներ: Ել ինչ ասել կուզէ, որ սրանք պիտի հեռու կենան քաղաքի ճշնոյ կենտրոն, հազար ու մի տեսակ է տիկնանքից, այստեղ վայել է ամենապարզ զբոսաբերութիւններ, դրանքներ. բայց դուք տեսնում էք նոյն էտիկները, նոյն վիզիտները, նոյն չապլ հագուստները... ամառանոց կանանց հասարակութիւնը մեծ քանակ է գործ դնում հագուստը հրապուրելի շինելու: Առհասարակ ամառանոցին յատուկ պարզութիւնը բացակայ է և դարձանալի չէ, որ այստեղ անասելի տրեւութիւն է տրեւում: Մինչև անգամ անառաք մէջ բազմաթիւ ուղիները դրօսանքների համար ծածկվել են խոտով, երևի այն պատճառով, որ մարդիկ այստեղ կանանց անտառում չեն զբոսնում, այլ իրանց օյտերը պահում են «կանանց դաշտի» համար»:

ԳԵՐԲԵՆՏԻՑ մեզ գրում են. «Ամսիս 17-ին հայոց ուսումնարանի բնում, հայ աշակերտահինների և աշակերտների մասնակցութեամբ արվեստական կանկանի օրհանգիստ: Պիէտայից յետոյ կարգադրեցան օրհանգիստներ՝ ներկայացան սկզբում օր. Յովհաննիսեան համառօտ կերպով բացատրեց, որ վաղուցի ի վեր խմբի նպատակն է եղել օգնել ուսումնարանի չորրորդ բաժնամուկը բանալու և այս նպատակին հասնելու համար նա վճռեց ներկայացումներ տալ և այս առաջին փորձին աջակցող պարտններին և մասնակցող երեխաների ծնողներին յայտնեց շնորհակալութիւն: Թատրոնը լի էր համադրականներով: Ժախվել է 101 ր. 50 կ. ամառանոց, օրից Կուրս գալով ծախի 14 ր. 67 կ. զուտ արգիւնք մնացել է 86 ր. 88 կոպէկ»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ԳՍՆԻ ԳԻՏ ԹԻՒՐԳՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՈՒՌԹԻՒՆԵՑ

Հայերը ցրուած են գլխաւորապէս Տաճկահայաստանի վան, Բաղէշ, Կարէն, Խաղբուր, Դիւար, Երեւն ու Նորկայ վիլայէթներում. այդպիսի ներքանց կազմում են աղաքականութեան մեծամասնութիւն: Նրանց պարագայութեան են երկրագործութիւն, այգեգործութիւն, արհեստ, վաճառականութիւն, անասնապահութիւն և մի անհնչան չափով էլ խաշնարածութիւն: Լեռների բազմաթիւ շղթայներով առհասարակ ծածկուած մեր երկրը ներկայացնում է մի երկրագործութեան յարմար ահագին տարածութիւն. սարերի մէջ ընկած են անազին հարկը դաշտեր՝ որոնք

շատ բերրի ու ջրաւէտ են: Հողի մշակման կերպերը նախապատկան են. երկրագործական գործիչները հնաւանդ ու պարզ են. վարի ու հնձի մէջ ոչ մի տեսակ մեքենայ չէ գործածվում: Գութանով վարեն ամեն գիւղացու կարողութիւնից վեր է. պէտք է անհնալ հինգ-վեց լուծ անասուն: Գիւղացուց մեծամասնութիւնը ունենում է արօր երկու կամ չորս եղով: Երկրագործութիւնը խրաւում է գիւղացու ամբողջ տարին. ամառը նա վարի ու հնձի հետ է, իսկ ձմեռը նա մնում է տուն և եղևներ է խնամում, ամառուան դաշտային աշխատանքի համար է պարարտացնում ներքանց: Դաժանակի մեծ մասն էլ նա պարագայ է: Երկրագործութեան մշակման առարկաներն են ցորեն, վարի, կորեկ, գլուղ (կորեկի մի տեսակ), կտուռա, տարեկան (համար), իսկ Գիւրքեքի հարաւարեկեան մասերում և բրինձ: Գիւղացին շատ չէ ցանում. սովորաբար ստացած բերքը ներքան կերակրում է մի տարի: Այդ երկուցի պատճառներն են ճանապարհների վատութիւնն ու անապատները, որ արգելք են դառնում հացահատկի ալ երկրները արտահանութեան, և բուն երկրի մէջ նրա սահմանաւոր չափով եղած ծախսը, քանի որ գիւղացի գլխովին երկրագործ են, քաղաքներին ու վրանաքանիք ջուրդերին պէտք եղած հացը մատակարարում են բացառապէս քաղաքներին չըջակայ գիւղերն ու մի քանի հացաւից դաւառները: Օրինակ, վանի հացի ամբարն են Արճէշն ու Հայոց ձորը. Բաղէշի ու Մշու համար՝ Մշու դաշտն ու Բուլանքը և այլն: Նահանգի միացեալ դաւառները շատ չաչին մասնակցութիւն են ունենում քաղաքներին հաց հայթայթելու գործում: Երկրագործական բերքերի վրայ դրուած տասնորդական հարկերն ևս մեծ արեւելքներ են հանում երկրագործի առաջ, հարկահան-կապալառու լինում են քաղաքացիք և ուստի իրը հարկ անուած բերքը տարվում է քաղաք: Այսպէս գիւղացին սահմանափակ ցանք անելով անվճարապէս ու զգալի կերպով վնասվում է, երբ ամառը, կարկուտը, իր ու կամ անասնային վարակիչ հիւանդութիւններն են հանում. այն ժամանակ նա անկարող է լինում նոյն իսկ իր յետագայ տարին անելիք ցանքի սերմացումը գնելու. աւելացրէք սրա վրայ պետական հարկերը ծանրութիւնը: Անճարացած նա ստիպվում է պարտք անել. իսկ երբ մի անգամ նա ընկաւ վաշխառուի ձեռքը, շուտ չի պրծնիլ:

Գիւրքեքի հայ գիւղացի երկրագործի կենտրոն աւելի ողորմելի ու կեղտոտ բան երեակայից ինքը, իր կինն ու երեխայը միշտ կեղտոտ, կիւսամերկ ու ոտաքերիկ: Այն տունը, որի մէջ անց է կացնում նա իր թշուառ գոյութիւնը, աւելի նման է գոմեշին, քան մարդու բնակարանին: Այդ ցածրիկ, սուկ, հաստ խաւով ծածկուած շինութիւնները կառուցուած են ցեխից, իրարու վրայ շարած ու ցեխով բռնուած անտաշ քարերից ու կամ քիչ տեղեր էլ անթուր լողիւնից: Նրա ապրուստն էլ ոչ սակաւ ողորմելի է. նրա ամբողջ տարուան կերակուրը թացան է (կաթնեղէն). ժախ համը այն ժամանակ նա կառնի, երբ կը մորթէ ստուրջը. դրութեան հասած անասունը և և կամ կերվող զբաղքը օր և է գործով: Ապրուստի թնթիւնութեան համար նա ունենում է մի բանի ոչխար, կով, մի քանի հատ հաւ, իսկ ունեւորները էգ գոմէշներ են:

Այգեգործութեամբ հայերը շատ են պարագայութեամբ համեմատաբար. բայց նա զարգացած չէ: Կան բազմաթիւ գաւառներ՝ ուր կարելի էր ամենայն յաջողութեամբ այգի և պարտիկ տնկել և ուր դուք մի քանի անգուղ ծառից բացի ոչինչ չէք գտնիլ: Այգեգործութիւնը ևս վիճակի մէջ է առաւելապէս Խաղբուրում. անառաքներն են նրա խաղոցն ու գինին: Լաւ են նոյնպէս Բաբերդը, Մուշը, Բաղէշն ու վանը: Աղբուրը բնորոշ խաղոցը ծախվում է Բաղէշի մէջ և տարածվում է շրջակայ բնակային երկրները:

Մանր առևտուրը և վաճառականութիւնը մեծ մասամբ հայերի ձեռքն են. Տաճկահայաստանի քաղաքացի հայերի մեծ մասը առևտրական են: Վաճառականութեան առարկաներն են տեղային և օտարերկրային բերքերն ու գործածվածքները, տեղային շաւիղէն, կտուռէն, կապերտներ, բուրդ, մաշ, կաշի, չամիչ, ցորեն, մրգեղէն, բնորոշ խնցիկէն, արտասահմանից բերուած բրդեղէն, բամբակեղէն, երկաթ է ու պողպատէ գործիքներ, շաքար, թէյ, նաֆթ և այլն: Օտար երկրների հետ յարաբերութիւն ունեցող վաճառականները հայերն են: Նշանաւոր են հայ հարուստ Բաղէշից ու Կարնիցից՝ որոնք առևտրական յարաբերու-

թեան մէջ են Պարսկաստանի, Ռուսաստանի ու Ֆրանսիայի հետ: Վաճառականութիւնն առհասարակ ընկած է Նա մի սահմանաւոր շրջանի մէջ է դառնում, կարող է մեծ վարկի ու ընդարձակութեան: Ոչ վարկ կայ և ոչ նախաձեռնական ընդարձակող ոգին:

Հայաստանի իր արտաւաճ լեռներով ներկայացնում է ընդարձակ առարկէք՝ անասնաբուծութեան համար, և անհերքելի մի իրողութիւն է, որ ոչ մի տեղ այն աստիճանի տարածված պարագայութեան չէ նա, ինչպէս մեր հայրենիքում: Ընտիր ցեղի ձիեր, ջրիւներ, գոմէշներ, եղևնր, ոչխարն ու այծը ամեն տեղ կը պատահին այստեղ: Հայերն ընդհանրապէս պարագայութեան են ոչխարաբուծութեամբ և գոմէշ ու եղ պահելով: Անուանի են Սամոյ ոչխարը և Նոնուսի գոմէշը: Ոչխարաբուծութիւնը՝ ապահով պարագայութեան է. ոչխարաբուծը իր ունեցած 40—500 և աւելի ոչխարից մի քանիսը ծախելով կարող է և տան ծախսը հոգալ և պետական հարկերը տալ: Բաւական է մասնանիչ անել այն հանգամանքին, որ ոչխարաբուծ հայերի մէջ պարագայութեան է պատահում: Հայաստանի ոչխարը ըշվում է Հայէք և Սիրիա, ինչպէս և փոքր Ասիայի մի քանի կողմեր. բուրդը արտահանվում է մեծ մասամբ Եւրոպա, իսկ մի մասն էլ տեղումս մշակվում է: Ոչխարաբուծ հայերը պարագայութեան են երկրագործութեամբ, որով հայթայթում են և իրանց հացը: Այդ հայերը կոպիտ ու անտաշ են, պինդ հայրենական աւանդութեանց ու եկեղեցական օրէնքներին: Վերին աստիճանի մեծ յարգ են ընծայում հոգևորական դասին ու գրագէտին առհասարակ. պարզ, բացասիրտ ու գիւրգաղիտ են: Բոլորն էլ համարեա զինուած են: Նրանց ապրուստը ոչնչով տարբերութիւն չունի երկրագործին:

(Կը շարունակվի)

ՆԱՍԱԿ ԹԻՒՐԳԻՍՏԻՑ

Զմիւռնիա, յուլիսի 17-ին

Ամսիս 8-ին, շաբաթ օր, «Պենթա» շոգենաւով քաղաքս հասան դեր. Նար-պէշ Լուսինեան Արտաբաղաբեան և «Արեւելի» թղթակցի հետ միասին: Տեղիս առաջնորդական տեղապահը, մի քանի քահանաներով դիմաւորելու գնաց նորին սրբազնութեան և այնտեղից եկան առաջնորդաբան. բայց ցաւելով պէտք է ասել, որ աղապին վարչութիւնը չէր փութացած զիմաւորել նորին սրբազնութեան, միայն Ռուսմասկան Խորհրդի անգամներէն մին կը նշմարվէր դիմաւորողներու մէջ: Նոյն օրը մի և նոյն շոգենաւով քաղաքս մեկնեցան սրբազանի ուղեկցիները, իսկ Նար-պէշ-սրբազան հարկադրվեալ ընդունել եղած հրաւերը և յետագիւր իր ուղեգրութիւն:

Հետեւալ օր, կիրակի, սրբազանը իմաստաւրք բարոյ մը խօսեց ս. Ստեփաննոս եկեղեցու մէջ՝ խոսեց քաղաքի մը առջև: Նախ նորին սրբազնութիւնը գովեց Զմիւռնիա քաղաքը, յետոյ գովեց և տեղիս հայ հասարակութիւնը, որ իր փորձաքննութեամբ հանդերձ կարողացել է ամեն կերպով պատասխան հանդիսանալ այնպիսի քաղաքի մը մէջ, ուր կը տրեւ մրցումն, և այսպէս պատուաւոր կերպով ներկայացնել հայ ազգը Խորպայցիների առջև. յետոյ համառօտ կերպով անհարկութիւն մը ըրաւ տեղիս վերջին ցաւալի դէպքերու վրա և ցաւ ի սիրտ յայտնեց, որ ամեն այցելած քաղաքները մի և նոյն կուսակցականութեան վէճերու հանգիստ էր և իրաւամբ ըսաւ, որ հայը միշտ այսպէս եղած է. երբ նա չունի արտաքին թշնամիներ, կը ստեղծէ ներքին խռովութիւններ, և վերջապէս կը քաղաքը խրատեց որ մի կողմ ձգելով կուսակցութիւնները, միա-նան և աշխատեն առաջադիմութեան համար:

Ամսոյ 16-ին, կիրակի, Վարդապետի տօնի առթիւ, նորին սրբազնութիւնը պատարագեց ս. Ստեփաննոս եկեղեցւոյ մէջ, և խոսեց քաղաքի մը առջև կրկին իմաստաւրք քաղաք մը խօսեցաւ և կրկին վերջում իր խօսքը ներկայ ժողովրդին ուղղելով ցաւ յայտնեց, որ ժողովրդի մէջ զեռ կը տրեւն կուսակցական բաժանումներ, թէև արտաքուստ ամեն խռովութիւն դադրած է, բայց ներքուստ կուսակցութիւնները իրենց կամքը առաջ կը քաշեն ի վնաս ազգին, և ապա մի քանի խրատական խօսքերով վերջացուց իր քաղաքը:

Տեղիս առաջնորդական ընտրութիւնը դեռ չը կատարուեցաւ, այս օրերս շարունակ մը կայ առաջնորդ ընտրելու վեր. Լուսինեան, թէև մեծա-

